



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌՇՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 09/22

02.06.2022թ.

ք. Երևան

ՀՀ ԱԺ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ԱԺ կողմից 2020 թվականի ապրիլի 16-ին ընդունված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՕ-240-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) համապատասխանությունը Սահմանադրության 1-ին, 5-րդ, 31-րդ, 34-րդ հոդվածներին, 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ մասերին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 64-րդ հոդվածին, 67-րդ հոդվածի 3-րդ կետին, 73-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին:

Ըստ Դիմողի, Օրենքը չի պատասխանում այն հարցին, թե ներդրված կառուցակարգի միջոցով որ գույքն է նախատեսվում բռնագանձել: Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը «ապօրինի ծագում ունեցող գույք» հասկացությունը սահմանում է որպես օրինական եկամուտներով չհիմնավորվող գույք: Այսինքն՝ Օրենքը ելնում է այն կանխավարկածից, որ գույքն ապօրինի է միայն այն բանի ուժով, որ առկա չեն դրա օրինական ծագումը հիմնավորող ապացույցներ և գույքի ապօրինի ծագումը որևէ կերպ չի պայմանավորվում քրեական օրենսգրքով նախատեսված արարքի կատարման կամ վարչական իրավախախտման հետ:

Օրենքով հետապնդվող նպատակի անհստակությունն ավելի է ընդգծվում, երբ համադրվում են Օրենքի դրույթները և ԱԺ ներկայացված Օրենքի նախագծի հիմնավորումը (այսուհետ նաև՝ Հիմնավորում): Հիմնավորման 4-րդ կետի համաձայն՝

առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձումը կարևորագույն գործիք է կոռուպցիոն և այլ բնույթի հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտները բռնագանձելու համար: Մինչդեռ Օրենքով նախատեսված չէ որևէ հստակ կարգավորում, որ «ապօրինի ծագում ունեցող գույքը» պատճառահետևանքային առումով (ուղղակի կամ անուղղակի) կկապի հանցագործության հետ, ընդհակառակը՝ Օրենքով նախատեսված որոշ դրույթների արդյունքում այդ կապը բացարձակապես խզվում է:

Դիմողը գտնում է, որ Օրենքն ինչպես ամբողջությամբ, այնպես էլ դրա առանձին դրույթներ հակասում են Սահմանադրությանը, մասնավորապես.

1. Օրենքն, ընդհանրապես, և դրա առանձին դրույթներ, մասնավորապես, չեն հետապնդում Սահմանադրությամբ նախատեսված լեգիտիմ նպատակ,

2. Օրենքը նախատեսում է Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված սեփականության հիմնական իրավունքին այնպիսի միջամտություն, որը խնդրահարույց է ինչպես հետապնդվող նպատակի լեգիտիմության, այնպես էլ ընտրված միջոցների համաչափության տեսանկյունից,

3. Օրենքը հետադարձ կերպով անձի վրա դնում է նախկինում որևէ իրավական ակտով չսահմանված պարտականություններ,

4. Օրենքը, չերաշխավորելով քաղաքացիական դատավարությանը հատուկ մրցակցային և հավասար պայմաններ, միաժամանակ անձի վրա դնելով ապացուցման անհամաչափ մեծ բեռ, խախտում է անձի արդար դատաքննության իրավունքը,

5. Օրենքով իրավասու մարմնի կողմից ընդունվող որոշումների դատական կարգով բողոքարկելու հնարավորություն չնախատեսելը խախտում է Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված՝ անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը,

6. Օրենքը ուսումնասիրության արդյունքներով հավաքված նյութերին ծանոթանալու և ստացված տվյալների առնչությամբ իրենց դիրքորոշումը ներկայացնելու փուլում չի երաշխավորում անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը,

7. Օրենքի մի շարք դրույթներ նախատեսում են Սահմանադրության 31-րդ հոդվածով նախատեսված մասնավոր կյանքի անձեռնմխելիության և 34-րդ հոդվածով նախատեսված անձնական տվյալների պաշտպանության հիմնական իրավունքների այնպիսի միջամտություն, որը խնդրահարույց է ինչպես հետապնդվող նպատակի լեգիտիմության, այնպես էլ ընտրված միջոցների համաչափության տեսանկյունից

8. Օրենքը պարունակում է մի շարք անորոշ կարգավորումներ, որոնք մի դեպքում հակասության մեջ են իրավական պետության սկզբունքի, իսկ մեկ այլ դեպքում՝ անձի հիմնական իրավունքները սահմանափակելիս օրենքներին ներկայացվող որոշակիության սահմանադրական պահանջների հետ,

9. Օրենքով դատախազությանը, որպես իրավասու մարմին, վերապահվել է լիազորություն, որը դուրս է վերջինիս՝ Սահմանադրությամբ սպառիչ կերպով սահմանված լիազորությունների շրջանակից:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ԱԺ կողմից 2020 թվականի ապրիլի 16-ին ընդունված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՕ-240-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) համապատասխանությունը Սահմանադրության 1-ին, 5-րդ, 31-րդ, 34-րդ հոդվածներին, 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ մասերին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 64-րդ հոդվածին, 67-րդ հոդվածի 3-րդ կետին, 73-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին:

Վիճարկվող օրենքն ԱԺ կողմից ընդունվել է 16.04.2020 թվականին, ուժի մեջ է մտել 23.05.2020 թվականին և կարգավորում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի հետ կապված հարաբերությունները, սահմանում է ուսումնասիրություն սկսելու հիմքերը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ հարուցելու և ուսումնասիրություն իրականացնելու իրավասու մարմինների շրջանակը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առնչությամբ միջազգային համագործակցության կանոնները, կարգավորում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված այլ հարաբերություններ (Օրենքի հոդված 1):

Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝
Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝

1. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:

2. Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք:

2. Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:

3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին և պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:

4. Անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

5. Անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող մանրամասները սահմանվում են օրենքով:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 64-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

2. Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Սահմանադրության 67-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

3) իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք:

Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն՝

1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Այսպես, Օրենքի կարգավորումների արդյունքում ՀՀ իրավական համակարգ է ներմուծվել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգ, որի համաձայն՝ որոշակի ազդակների դեպքում դատախազությունը սկսում է անձի (նրա հետ փոխկապակցված անձանց) գույքի օրինականության ուսումնասիրություն և այն դեպքում, երբ անձին (նրա հետ փոխկապակցված անձանց) պատկանող գույքի արժեքը գերազանցում է նրանց օրինական եկամուտները, դիմում է դատարան՝ քաղաքացիական դատավարության կարգով այդ գույքը բռնագանձելու համար: Եթե անձը դատավարության ընթացքում չի կարողանում ապացուցել, որ գույքի ծագումը հաստատվում է օրինական եկամուտներով, ապա այն բռնագանձվում է հոգուտ Հայաստանի Հանրապետության:

Օրենքի նախագծի հիմնավորման մեջ ասվում է, որ առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձումը (non-conviction based asset forfeiture) կարևորագույն գործիք է կռուուպցիոն և այլ բնույթի հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտները բռնագանձելու համար: Այս իրավական մեխանիզմը թույլ է տալիս անօրինական ճանապարհով ստացված գույքի վրա արգելանք կիրառել և այն բռնագանձել առանց անձի նկատմամբ մեղադրական դատավճռի կայացման: Սա հատկապես կարևոր գործիք է, այն դեպքերի համար, երբ քրեական հետապնդումն իրականացնելն անհնարին է օբյեկտիվ պատճառներով:

Նման օրենքի ընդունմանն ուղղված քայլերն ինքնին արդարացի են այն տեսանկյունից, որ հանցագործությունը եկամտի աղբյուր չդառնա, և ապօրինի ձեռք

բերված գույքի բռնագանձման հնարավորությունը կրի կանխարգելիչ բնույթ: Սակայն Օրենքում առկա են մի շարք դրույթներ, որոնք խնդրահարույց են սահմանադրորեն երաշխավորված մի շարք սկզբունքների և իրավունքների տեսանկյունից:

1. Օրենքը խնդրահարույց է անձի իրավական վիճակը վատթարացնելու սահմանադրական արգելքին համապատասխանության տեսանկյունից:

Այսպես, Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

2. Հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ ուսումնասիրության նյութերով հայտնի հանգամանքները՝ իրավասու մարմինը որոշում է ուսումնասիրվող ժամանակահատվածը, որը ներառում է ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից մինչև ուսումնասիրության ավարտն ընկած ժամանակահատվածը, ինչպես նաև ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից առաջ ընկած ժամանակահատվածը, որը չի կարող լինել ավելի երկար, քան ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացմանը նախորդող տասը տարին, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

3. Եթե ուսումնասիրության նյութերով ի հայտ են գալիս սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ, և այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցները պահպանված են, ապա իրավասու մարմինը կայացնում է որոշում՝ սահմանելով ուսումնասիրվող նոր ժամանակահատված, որը կարող է ներառել բացառապես 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը:

Այսինքն՝ ուսումնասիրության ժամանակահատվածը կարող է ընդգրկել նաև ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից առաջ ընկած ժամանակահատվածը, որը չի կարող լինել ավելի երկար, քան ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացմանը նախորդող տասը տարին: Իսկ եթե ուսումնասիրության նյութերով ի հայտ են գալիս նախատեսված տասը տարվա ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ, ապա ուսումնասիրվող ժամանակահատվածը կարող է ներառել ընդհուպ մինչև 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը:

Ստացվում է, որ Օրենքը անձի վրա դնում է իր գույքի ձեռքբերումը օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով հիմնավորելու այնպիսի պարտավորություն, որը նախկինում չի եղել: Քանի որ լինելու են բազմաթիվ դեպքեր, երբ անձն իր գույքը ձեռք է բերել Օրենքի ընդունումից առաջ, ապա այստեղ պետք է խոսել օրենքի հետադարձ ուժի կիրառման հնարավորության մասին:

Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն՝

1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Սահմանադրական դատարանը 2008 թվականի հունվարի 15-ի ՍԴՈ-723 որոշման մեջ արձանագրել է հետևյալ դիրքորոշումը. «4. ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ մասն ամրագրում է անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի մերժման սկզբունքը: Վերջինս հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք:»:

Սույն դեպքում Օրենքով անձի վրա պարտավորություն է դրվում ապացուցելու 1991 թվականի սեպտեմբերի 21-ից սկսած իր գույքի՝ օրինական եկամուտներով ձեռք բերված լինելը: Այսինքն՝ որպեսզի անձը կարողանա դա հիմնավորել, պետք է պահպանած լինի 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ձեռք բերված ցանկացած գույքի վերաբերյալ փաստաթղթերը: Նման պահանջ մինչև Օրենքի ընդունումը չի եղել: Ստացվում է, որ Օրենքն անձի վրա դրել է իր վիճակը վատթարացնող պարտավորություն և դրան տվել հետադարձ ուժ, որը Սահմանադրությամբ արգելված է:

Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Սահմանադրությունը, նախատեսելով, որ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն, այդ կարգավորումից բացառություններ չի նախատեսել: Այսինքն՝ ոչ մի պարագայում անձի վիճակը վատթարացնող իրավական ակտը հետադարձ ուժ ունենալ չի կարող: Նման մոտեցումը հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների

կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք:

2. Օրենքը խնդրահարույց է արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ նշել է. «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ

անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոսնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեզիտիմ ակնկալիքով:

Օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝

1. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, քանի դեռ չի ապացուցվել գույքի ձեռքբերման օրինականությունը:

2. Դատարանը կարող է կայացնել վճիռ՝ հիմք ընդունելով գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, եթե գործի քննության արդյունքում հայցվորն ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը, այդ թվում՝ մեկ միավոր գույքը, մի քանի միավոր գույքը կամ մեկ միավոր գույքի բաժինը, չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով:

3. Պատասխանողը կարող է հերքել գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը՝ ներկայացնելով օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը հիմնավորող ապացույցներ:

4. Այն դեպքերում, երբ փաստերը, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, անձը չի կրում իր կողմից ապացուցման ենթակա փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները, եթե ապացուցում է, որ տվյալ ապացույցը ոչնչացվել է կամ կորել է ոչ իր մեղքով:

Նման մոտեցում չկա նույնիսկ քրեական և վարչական գործերի քննության ժամանակ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի

մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին տալիս է հաստատող պատասխաններ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածը վերաբերում է վարչական վարույթում ապացուցման բեռի բաշխմանը և սահմանում է, որ՝

1. Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

Վիճարկվող Օրենքի 22-րդ հոդվածից ուղղակիորեն բխում է, որ ցանկացած պարագայում անձի ձեռք բերած գույքն համարվում է ապօրինի, քանի դեռ վերջինս հակառակը չի ապացուցել:

Հարկ է ուշադրություն դարձնել, որ Օրենքով որպես իրավասու մարմին է նախատեսված Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանումը:

Քաղաքացիական դատավարությունում գործերը քննվում են հավասարության և մրցակության հիման վրա, սակայն սույն պարագայում ստացվում է, որ ապացուցման բեռն անհամաչափ է բաշխվում կողմերի միջև: Իրավասու մարմինն Օրենքով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում կարող է սկսել ուսումնասիրություն և դիմել դատարան, իսկ մյուս կողմը, ում գույքը ենթադրվում է, որ ապօրինի ծագում ունի, պետք է հիմնավորի, որ դա այդպես չէ: Սակայն, հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը, որ սեփականության իրավունքը երաշխավորված է Սահմանադրությամբ, իսկ սույն դեպքում, փաստորեն, քաղաքացիական դատավարության կարգով անձին սեփականությունից զրկելուն է ուղղված դատավարությունը, ուստի, առավել արդարացի և հիմնավոր կլիներ, որ իրավասու մարմինն իր հերթին հիմնավորեր, որ գույքն ապօրինի է ձեռք բերված, իսկ անձն էլ իր հերթին հիմնավորեր իր գույքի՝ օրինական եկամուտներով ձեռք բերված լինելու փաստը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավասու մարմինը սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում կայացնում է ուսումնասիրություն սկսելու մասին որոշում՝ նշելով դրա հիմքում ընկած փաստական տվյալները և սույն օրենքի 5-րդ հոդվածում նախատեսված այն հիմքը, որի հիման վրա սկսվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը: Իրավասու մարմինն ուսումնասիրություն սկսելու մասին որոշմամբ նաև նշում է այն անձի տվյալները, որին ենթադրաբար պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասով էլ նախատեսված են ուսումնասիրության ժամկետները, որոնց մասին իրավասու մարմինը կայացնում է որոշում:

Օրենքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ուսումնասիրության վարույթի ընթացքում իրավասու մարմինը կայացնում է որոշումներ: Սակայն Օրենքով նախատեսված չէ, թե ինչ ժամկետում և ինչ կարգով է հնարավոր բողոքարկել այդ որոշումները: Օրենքից պարզ չէ նաև, թե դատական կարով բողոքարկման դեպքում որ դատարան պետք է ներկայացվի հայցը՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, թե վարչական:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2.1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի քննության, ինչպես նաև մինչև գործի հարուցումն առանձին դատավարական գործողությունների կատարման նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով:

Ստացվում է, որ ուսումնասիրության վարույթով սկսվում է անձին սեփականությունից զրկելուն ուղղված գործընթաց, որի ընթացքում կայացվում են որոշումներ, որպիսի պարագայում անձը զրկված է իր իրավունքներն ու օրինական շահերը դատական կարգով պաշտպանելու իրավունքից, քանի որ հստակ կարգավորում չկա, թե օրինակ՝ ուսումնասիրության ընթացքում կայացված որոշումների բողոքարկման վրա տարածվում են վերջնական դատական ակտերի բողոքարկման կարգը, թե՞ միջանյալ դատական ակտերի:

Նշված մասով թերի կարգավորումը հանգեցնում է ոչ միայն անձի՝ արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքի խախտման, այլև հանգեցնում է իրավական որոշակիության սկզբունքի խաթարման, որի առնչությամբ Սահմանադրական դատարանը ՄԴՈ-1176 որոշմամբ նշել է. «...իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության»:

3. Օրենքը խնդրահարույց է անձի սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից:

Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, քանի դեռ չի ապացուցվել գույքի ձեռքբերման օրինականությունը:

Այսինքն՝ Օրենքով նախատեսվում է միջամտություն անձի սեփականության իրավունքին: Ուստի սեփականության իրավունքի սահմանափակմանն անդրադառնանք Սահմանադրության 78-րդ հոդվածի տեսանկյունից (համաչափության սկզբունք):

Անդրադառնալով համաչափության սկզբունքին՝ 2007 թվականի փետրվարի 7-ի ՄԴՈ-677 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «...Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է

հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար»:

Օրենքի վերլուծությունից կարելի է ենթադրել, որ սեփականության իրավունքին միջամտությանը հիմք կարող է ծառայել Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանրային շահի պաշտպանությունը: Միաջազգային փորձը ևս ցույց է տալիս, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագանձումը գործում է ընդհանուր շահերից ելնելով, որպես կանխարգելիչ միջոց՝ հանցավոր գործունեությամբ զբաղվելու մտադրություն ունեցողների համար, ինչպես նաև՝ երաշխավորում է, որ հանցագործությունը եկամտի աղբյուրի չվերածվի (DENISOV AND MOISEYEVA v. RUSSIA, no 62936/00, կետ 58):

Այսինքն՝ որպեսզի հանրային շահի պաշտպանության նկատառումից ելնելով՝ սեփականության իրավունքին միջամտությունն ունենա լեգիտիմ նպատակ, անհրաժեշտ է հետևյալ պայմանների առկայությունը.

1. առկա լինի հանրորեն վտանգավոր արարք կամ դրա կատարման վերաբերյալ հիմնավոր կասկած,

2. պատճառահետևանքային կապ արարքի և ապօրինի ծագում ունեցող գույքի միջև:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված են թվով 5 հիմքեր, որոնց առկայության դեպքում իրավասու մարմինը պետք է սկսի անձի գույքի օրինականության ստուգում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

1. Սույն օրենքով նախատեսված կարգով իրավասու մարմինը կարող է սկսել ուսումնասիրություն հետևյալ հիմքերի առկայության դեպքում.

1) առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտ, որով հաստատվում է սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարումը, և տվյալ քրեական գործի նյութերով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ դատապարտված անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որը չի բռնագանձվել դատավճռով.

Նշված դեպքում ուսումնասիրությունը սկսելու հիմքը օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտն է, ապօրինի ծագում ունեցող գույքի մասին կասկածը և այն հանգամանքը, որ այդ գույքը դատավճռով չի բռնագանձվել:

Այս դեպքում, նախ, հարց է ծագում, թե ինչու ապօրինի ծագում ունեցող գույքի շրջանակը չի նույնականացվել և բռնագանձվել հենց քրեական դատավարության շրջանակներում:

ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ցանկացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, այնպիսի հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները և միջոցները, որի կատարման արդյունքում ստացվել է գույք, ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, սույն օրենսգրքի 215.1-ին, 235.1-ին և 267.1-ին հոդվածներով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկաները, իսկ դրանց բացակայության դեպքում դրանց համարժեք գույքը, բացառությամբ բարեխիղճ երրորդ անձի գույքի, տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույքի, ենթակա է բռնագանձման՝ հոգուտ պետության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝

1. Դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝

16) ապացուցված է արդյոք, որ բռնագանձման ենթակա գույքը ստացվել է հանցագործության կատարման արդյունքում կամ այդ գույքի օգտագործումից կամ օգտագործվել է կամ նախատեսվել է օգտագործվել որպես հանցագործության գործիք կամ միջոց կամ ուղղվել է ահաբեկչության ֆինանսավորմանը կամ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 215.1-ին հոդվածի 7-րդ մասով նախատեսված մաքսանենգության առարկա:

Վերոգրյալից բխում է, որ եթե քրեական գործի շրջանակներում բացահայտվում է հանցագործության արդյունքում ձեռք բերված կամ այլ կերպ փոխկապակցված գույք, ապա այն պետք է բռնագանձվի քրեական դատավարության շրջանակներում:

Կարելի է ենթադրել, որ քրեական գործի շրջանակներում գույքը չբռնագանձելը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքներով, որ վարույթն իրականացնող մարմինը ժամանակին չի բացահայտել և դատարանին չի ներկայացրել նման գույքի մասին տեղեկություններ կամ այդ տեղեկությունները եղել են ոչ բավարար, որի պայմաններում դատարանը չի գտել կապ հանցագործության և այդ գույքի միջև:

Տվյալ դեպքում, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված է՝ «տվյալ քրեական գործի նյութերով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու», այստեղից հարց է առաջանում՝ եթե քրեական գործի ընթացքում (որի ժամանակ ուսումնասիրվում էին այդ նյութերը) հնարավոր չի եղել ապացուցել տվյալ գույքի անօրինական լինելը, ապա քաղաքացիական վարույթով դա ինչպես է ապացուցվելու, ավելին՝ ինչպես է ապացուցվելու հանցագործության և դրա արդյունքում ձեռք բերված գույքի պատճառահետևանքային կապը:

Օրենքով նախատեսված այս հիմքը չունի նաև որևէ ժամանակային սահմանափակում: Այսինքն՝ պարզ չէ, թե մեղադրական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ինչ ժամկետում կարող է սկսվել գույքի ծագման օրինականության ուսումնասիրության վարույթ: Այս առումով օրենսդիրը որևէ ժամկետային սահմանափակում չի նախատեսել, ինչը նշանակում է, որ ուսումնասիրությունը կարող է սկսվել անձի դատապարտումից և անգամ պատժի կրումից շատ տարիներ անց:

Առավել խնդրահարույց է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, համաձայն որի՝

1. Սույն օրենքով նախատեսված կարգով իրավասու մարմինը կարող է սկսել ուսումնասիրություն հետևյալ հիմքերի առկայության դեպքում.

2) հարուցված քրեական գործով անձը որպես մեղադրյալ է ներգրավվել սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար, և առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը դիտարկենք Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի հետ համատեղ: Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասն, իր հերթին, սահմանում է՝

սույն օրենքով նախատեսված վարույթին զուգահեռ ընթացող քրեական գործի վարույթի ավարտվելը, այդ թվում՝ արդարացման դատավճռի կայացումը, կամ արդարացնող հիմքով քրեական գործի վարույթը կարճելը կամ քրեական հետապնդումը դադարեցնելը հիմք չեն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դադարեցման համար:

Վերոգրյալի վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ փաստորեն, անձի գույքի նկատմամբ բռնագանձման գործընթաց կարող է ընթանալ նույնիսկ այն դեպքում, երբ ապացուցվի, որ որևէ հանցագործություն տեղի չի ունեցել, կամ տվյալ անձը մեղավոր չէ տվյալ հանցագործության համար: Նման պայմաններում անձի սեփականությանը միջամտությունը չունի որևէ լեգիտիմ նպատակ, անհասկանալի է, թե երբե գույքը հանցագործության արդյունքում ձեռք չի բերվել, ապա դրա բռնագանձումը հանրային ինչ շահ է հետապնդում:

Օրենքով կարգավորում չկա նաև, թե միմյանց զուգահեռ ընթացող Օրենքով նախատեսված վարույթը և քրեական գործի վարույթն ինչպես են հարաբերակցվելու, քանի որ պարզ չէ, թե ինչ սկզբունքով է որոշվելու, թե որ վարույթով է իրականացվելու ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝

1. Սույն օրենքով նախատեսված կարգով իրավասու մարմինը կարող է սկսել ուսումնասիրություն հետևյալ հիմքերի առկայության դեպքում.

5) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-4-րդ մասերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ առաջին 4 հիմքերի դեպքում գույքի բռնագանձման վարույթը կապված է հանցագործության դեպքի հետ.

1) առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտ, որով հաստատվում է սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարումը, և տվյալ քրեական գործի նյութերով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ դատապարտված անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որը չի բռնագանձվել դատավճռով.

2) հարուցված քրեական գործով անձը որպես մեղադրյալ է ներգրավվել սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար, և առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք.

3) առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման առնչությամբ քրեական հետապնդումը կամ քրեական գործի հարուցումն անհնար է հետևյալ հիմքերից մեկով.

ա. ընդունվել է համաներման մասին օրենք,

բ. անցել են վաղեմության ժամկետները,

գ. անձը մահացել է,

դ. անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկվելու՝ օրենքով նախատեսված տարիքին.

4) առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման առնչությամբ հարուցված քրեական գործը կասեցվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դեպքում անձի գույքի բռնագանձման վարույթ սկսելու համար հանցագործության դեպքի կամ դրա կասկածի նախապայման չկա, այսինքն՝ հանրային մեծ վտանգավորություն ունեցող արարքի նախապայման չկա: Տվյալ դեպքում, անձի գույքի՝ հանցագործության հետ պատճառահետևանքային կապի բացակայության պայմաններում, կարծում ենք, անձի սեփականության իրավունքին միջամտությունը չունի լեգիտիմ նպատակ՝ ի շահ որի կարելի էր բռնագանձել անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը: Իսկ եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հարուցվի քրեական գործ, ապա գույքի բռնագանձումը կիրականացվի կամ քրեական գործի շրջանակներում, կամ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4 կետերի հիման վրա:

Օրենքը չի հստակեցնում նաև, թե անձին պատկանող օրինակ որ գույքն է ենթակա բռնագանձման: Օրինակ՝ անձը հանցավոր ճանապարհով ձեռք է բերել 50.000 ԱՄՆ դոլար գումար և այդ նույն ընթացքում ձեռք է բերել 2 հատ 50.000 ԱՄՆ դոլար արժողությամբ

գույք: Տվյալ դեպքում ինչպես է որոշվելու, թե որ գույքն է ձեռք բերվել հանցավոր ճանապարհով, որը ոչ, և որ գույքն է ենթակա բռնագանձման:

4. Օրենքը խնդրահարույց է իրավասու մարմնի՝ սահմանադրական լիազորություններին համապատասխանության տեսանկյունից:

Օրենքի 3-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ իրավասու մարմին է ճանաչված Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանում:

Սահմանադրության 176-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

2. Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝

1) հարուցում է քրեական հետապնդում.

2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.

3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.

4) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.

5) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

3. Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

4. Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա:

5. Դատախազության կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

Այսինքն՝ ըստ Սահմանադրության, դատախազությունը, օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

Դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման դեպքերը սահմանված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն որի՝

2. Դատախազը պետական շահերի պաշտպանության հայց հարուցում է հետևյալ բացառիկ դեպքերում, երբ՝

1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել, կամ

2) պետական շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի.

3) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքներով առկա են գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքեր:

3. Եթե դատախազը գտնում է, որ առկա են բավարար հիմքեր պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար, ապա իրավունք ունի մինչև հայց հարուցելը նախազգուշացնելու պետական շահերին վնաս հասցրած անձին վնասը կամովին հատուցելու մասին:

Ստացվում է, որ Սահմանադրությունը Դատախազությանն իրավասություն է տալիս օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց ներկայացնել դատարան, սակայն Օրենքով Դատախազությանն իրավասություն է վերապահվել սկսել անձի գույքի ծագման օրինականության ուսումնասիրության վարույթ, որը Սահմանադրորեն հստակ սահմանված Դատախազության լիազորությունների շրջանակից դուրս է, իսկ «Դատախազության մասին» օրենքի 29-րդ հոդվածը Դատախազությանն իրավունք է տալիս «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքներով գույքի բռնագանձման հայց հարուցել դատարան, այլ ոչ՝ գույքի օրինականության ուսումնասիրության վարույթ իրականացնել: Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Ստացվում է, որ Սահմանադրությամբ լիազորված չլինելով իրականացնել գույքի ծագման օրինականության ուսումնասիրություն, Օրենքով Դատախազությանը նման գործառույթ իրականացնելու իրավունք է վերապահվել:

Գործող կարգավորումը թույլ է տալիս եզրակացնել, որ անհրաժեշտ է անձի գույքի օրինականության ուսումնասիրության իրականացումը վերապահել անկախ և ինքնավար մարմնի, որը բավարար հիմքերի առկայության դեպքում կղիմի դատարան՝ գույքի բռնագանձման պահանջով:

Վերոգրյալի վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ թեև արդարացի է նման օրենքի ընդունմանն ուղղված քայլը, այնուամենայնիվ, Օրենքը լի է բազմաթիվ խնդրահարույց դրույթներով, որոնք չեն բխում սահմանադրորեն երաշխավորված սկզբունքներից:

Օրենքով գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի կիրառումը հիմնավորված չէ: Նման մոտեցման արդյունքում, հաշվի առնելով նաև, որ ուսումնասիրության ժամանակահատվածը կարող է ներառել 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը, որի դեպքում դժվարանում է գույքի օրինական ձեռք բերված լինելու փաստն ապացուցելը (օրինակ՝ հենց միայն այն հիմնավորմամբ, որ նախկինում նման պահանջ չի եղել, և անձը, հնարավոր է չի պահպանել գույքի ձեռքբերման պայմանագրերը կամ այլ փաստաթղթերը), չեն բացառվելու դեպքերը, երբ անձինք անհիմն գրկվեն իրենց սեփականությունից, որը թեև օրինական ճանապարհով են ձեռք բերել, բայց չեն կարողացել ապացուցել: Ստացվում է, որ միայն կասկածի հիման վրա անձը, հնարավոր է, գրկվի իր սեփականությունից:

Օրինաստեղծ գործունեության խնդիրն է ապահովել Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների ու ազատությունների երաշխավորված և համալիր իրացումը՝ որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման: Մասնավորապես, իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով պետության շահերի պաշտպանության առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման: Տվյալ դեպքում իրավունքի գերակայության սկզբունքից ելնելով, ինչպես նաև

օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից անհրաժեշտ է սահմանել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող իրավակարգավորումներ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ ԱԺ կողմից 2020 թվականի ապրիլի 16-ին ընդունված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՕ-240-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխանությունը Սահմանադրության 1-ին, 5-րդ, 31-րդ, 34-րդ հոդվածներին, 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ մասերին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 64-րդ հոդվածին, 67-րդ հոդվածի 3-րդ կետին, 73-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին խնդրահարույց է:

Համակարգող՝

X

Լյուդվիկ Դավթյան